ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՏԴ 93/94
DOI: 10.56246/18294480-2024.16-109

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՔՆԱՐԻԿ
ԳՊՀ դասախոս,
պատմական գիտությունների թեկնածու
էլփոստ՝ k_narik@mail.ru

Խորհրդային Միության փլուզումից և Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակումից անմիջապես հետո հայրենիք վերադարձավ հայ ազգային ավանդական Ռամկավար ազատական կուսակցությունը, որը հայրենիքում գրանցվեց 1991 թվականի հուլիսի 4-ին «Հայաստանի ռամկավար ազատական կուսակցություն» (ՌԱԿ) անունով:

ՌԱԿ-ը մասնակցություն է ունեցել Հայաստանի երրորդ Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում, հայրենիքի օժանդակության և Արցախյան ազգային-ազատագրական պայքարում:

ՌԱԿ-ը «Հայաստան» համահայկական հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի անդամ է և ակտիվ մասնակցություն է ունենում հիմնադրամի նվիրահավաքներին: Եղել է նաև Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի անդամ:

Լինելով ազգային կուսակցություն՝ ՌԱԿ-ը իր հիմնական նպատակն ու գործունեության ուղղություններն է համարել Հայ դատի հետապնդումը, Հայաստանի վերաշինությունը, բարգավաճումն ու զարգացումը, տնտեսական ու մշակութային վերելքը, ռամկավար ազատական սկզբունքների կիրարկումը հայ պետական և հանրային կյանքում, հայ ժողովրդի ազգահավաքը Մայր հայրենիքում և հայապահպանությունը, բռնագրավյալ հայկական հողերի ազատագրումն ու միավորումը Հայաստանին, հյուրընկալ երկրներում հավատարիմ քաղաքացիների պատրաստումը, հայ գաղութների կազմակերպումը, գաղութներում հայկական մշակույթի պահպանումն ու զորացումը, Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդումը, կուսակցությունների, կառույցների հետ համագործակցությունը, Հայաստանյայց Առաքելական եկեղեցու միասնականության վերականգնումը: Արցախյան հարցում կողմնակից է քաղաքական բանակցությունների միջոցով հարցի լուծմանը՝ հիմքում դնելով ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը:

1990-ական թվականներին ՌԱԿ-ը պառակտվեց, որը մինչև օրս հաղթահարված չէ: Միավորման ուղղությամբ քանիցս ձեռնարկված փորձերը հաջողությամբ չեն պսակվել: Այնուհանդերձ անգնահատելի է ՌԱԿ-ի պատմական դերն ու ավանդը հայապահպանության, հայրենիքի հետ կապերի ամրապնդման, հայության իրավունքների պաշտպանության, երիտասարդ սերնդի շրջանում հայրենասիրության և ազգային հպարտության սերմանման գործում:

Բանալի բառեր՝ *Հայաստանի Հանրապետություն, Ռամկավար ազատական կուսակցություն, ՌԱԿ Ընդհանուր պատգամավորական ժողով, ՌԱԿ կենտրոնական վարչություն, ՌԱԿ ակումբ, ՌԱԿ շրջանային վարչություն, ՌԱԿ ատենապետ, Հայտարարություն, Հայ դատ, Արցախյան ազգային-ազատագրական պայքար:*

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը հող նախապատրաստեց հայ ազգային ավանդական քաղաքական կուսակցությունների՝ Հայ հեղափոխական դաշնակցության (ՀՅԴ), Ռամկավար ազատական կուսակցության (ՌԱԿ) և Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցության (ՍԴՀԿ) հայրենիք վերադարձի և գործունեություն ծավալելու համար: Խորհրդային Հայաստանում այդ կուսակցությունների գործունեությունը արգելված էր, և միայն Խորհրդային Միության փլուզումից հետո նրանք կարողացան վերադառնալ և իրենց գրասենյակները բացել Հայաստանի Հանրապետությունում, ակտիվ մասնակցություն ունենալ երկրի հասարակական-քաղաքական կյանքում և Արցախյան ազգային-ազատագրական պայքարում:

Հայաստանի անկախության վերականգնումը ՌԱԿ-ի[1] կողմից ողջունվեց մեծ ոգևորությամբ: 1991 թվականից հաստատվելով հայրենիքում՝ ՌԱԿ-ը իր նպաստը բերեց նորանկախ հայրենիքի զարգացման ու կայունացման գործին: Ելնելով Հայաստանում տիրող ճգնաժամից և հավատարիմ իր դավանանքին՝ ՌԱԿ-ը սերտորեն համագործակցեց և զորավիգ կանգնեց Հայաստանի բոլոր իշխանություններին: Կուսակցությունը գործունեության առաջին օրերից ցուցաբերեց իրատեսական մոտեցում, չդրսևորեց իշխանական հավակնություններ և ընդհանուր առմամբ իշխանությունների հետ խնդիրներ չուներ[2]:

---

[1] Ռամկավար ազատական կուսակցությունը հիմնադրվել է 1921թ. հոկտեմբերի 1-ին Կ.Պոլսում Վերակազմյալ հնչակյան, Ազատական կուսակցության, Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության և բոլոր գործող ազատական-ռամկավար կազմակերպությունների միավորման արդյունքում:

[2] Սփյուռքի հեռանկարները գլոբալացվող աշխարհում, միջազգային համաժողով, զեկուցումների ժողովածու, Երևան, 2012, էջ 114-115:

Պատմական համարելով ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից 1990 թվականի օգոստոսի 23-ին ընդունված Հայաստանի անկախության մասին հռչակագիրը՝ ՌԱԿ-ը նշում էր, որ անկախության հռչակագրով «հիմը դրած կը տեսնե իր ռամկավարական և ազատական սկզբունքներուն կիրարկման, մասնավորապես ազատ նախաձեռնության վրա հիմնված տնտեսությունը»[1]:

ՌԱԿ-ը հույս է հայտնում, որ Հայաստանի նոր Հանրապետությունը «պետք է հիմնական կռվանը հանդիսանա տարագիր հայ ժողովրդի բեկորներուն վերամիավորման ու մեր ազգային բոլոր արդար պահանջներուն ու իղձերուն իրագործման՝ հայկական ցեղասպանության միջազգային ճանաչումով և պատմական մեր հայրենիքի հողային ամբողջականության վերականգնումով»[2]:

ՌԱԿ-ի գործունեության հիմնական ուղղությունը առաջին հերթին հայրենի ժողովրդին և պետականության հզորացմանը օժանդակելն է, հայրենիքի ներքին տնտեսական, սոցիալական զարգացումների մեջ գործուն դեր ստանձնելը:

Կուսակցությունը հայրենիքի կողքին էր 1988 թվականի Սպիտակի ավերիչ երկրաշարժից տուժած շրջաններին օգնելու, ազգային զարթոնքին, Արցախի ազգային-ազատագրական պայքարին աջակցություն ցուցաբերելու (զենքի և սննդի մատակարարում) և մասնակցելու գործում: Հիմնական ծրագրերում հանդես է եկել Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) հետ սերտ գործակցությամբ: ՌԱԿ-ը իր դերակատարությունն ունեցավ նաև մի շարք երկրներում նորանկախ Հայաստանի Հանրապետության հյուպատոսարանների և դեսպանատների բացման գործում: Կուսակցությունը 1992 թվականին հիմնադրված «Հայաստան» համահայկական հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի անդամ է, ակտիվ մասնակցություն ունի հիմնադրամի նվիրա-հավաքներին:

ՌԱԿ-ը սփյուռքում ունի գործունեության մեծ փորձ: ՌԱԿ Ակումբներ և Շրջանային վարչություններ են գործում Միջին Արևելքում, Եվրոպայում, Հյուսիսային և Հարավային Ամերիկայում, Ավստրալիայում, Հայաստանում և Արցախում: Կուսակցության նախաձեռնությամբ սփյուռքում ստեղծված բազմաթիվ մշակութային, բարեգործական, կրթական հաստատությունները լծված են հայապահպանության, հայ ինքնության պահպանության, հայրենիքին աջակցելու կարևորագույն գործին:

---

[1] Սփյուռքահայ կազմակերպություններ, Երևան, 2002, էջ 140-141: Տե՛ս նաև՝ «Հայ սփյուռք» հանրագիտարան, «Հայ սփյուռք» հանրագիտարանի խմբագրական հանձնաժողով՝ Հ.Մ. Այվազյան (գլխ. խմբագիր-տնօրեն) և ուր., Երևան, Հայկ. հանրագիտարան հրատ., 2003, էջ 724: Տե՛ս նաև՝ Հայկական հարց հանրագիտարան, https://hy.wikisource.org//wiki/Էջ: Հայկական_Հարց_Հանրագիտարան_(Armenian_Question_Encyclopedia).djvu/384

[2] Նույն տեղում:

Կուսակցության գերագույն օրենսդիր մարմինը Ընդհանուր պատգամավորական ժողովն է, իսկ գործադիրը՝ Կենտրոնական վարչությունը: ՌԱԿ-ը մինչ օրս գումարել է 29 Ընդհանուր պատգամավորական ժողով, որոնցից վերջինը՝ 2023թ. մայիսի 25-28-ին Երևանում: Ատենապետ է ընտրվել Մայք Խարապյանը (Կանադա):

Սկզբնավորման օրվանից ՌԱԿ-ը հրատարակել է պաշտոնաթերթեր և պարբերականներ սփյուռքի գրեթե բոլոր գաղթավայրերում: Ներկայումս կուսակցության տպագիր թերթերից են՝ «Ռամկավար մամուլ, պաշտօնական լրատու», «Նոր օր» (ԱՄՆ), "The Armenian Mirror-Spectator" (ԱՄՆ), «Արեւ» (Եգիպտոս), «Պայքար» (ԱՄՆ), «Ապագայ» (Կանադա), «Սարդարապատ» (Արգենտինա), «Նոր աշխարհ» (Հունաստան) շաբաթաթերթերը, «Զարթօնք» օրաթերթը (Լիբանան), «Հայ կյանք» ազգային, հասարակական, մշակութային էլեկտրոնային պարբերականը (Աթենք):

Հանդիսանալով ազգային կուսակցություն՝ ՌԱԿ-ը իր հիմնական նպատակն ու գործունեության ուղղություններն է համարել Հայ դատի հետապնդումը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը, ամբողջական զորակցությունը հայրենի պետականությանը, հայրենաբնակ հայ ժողովրդի անվտանգությունը և հայրենի սահմանների անձեռնմխելիությունը, հայոց բանակի հզորացումը, Հայաստանի վերաշինությունը, բարգավաճումն ու զարգացումը, տնտեսական ու մշակութային վերելքը, ռամկավար ազատական սկզբունքների կիրարկումը հայ պետական և հանրային կյանքում, հայ ժողովրդի ազգահավաքը Մայր հայրենիքում և հայապահպանությունը, հայերի՝ Թուրքիայում ունեցած իրավունքների ու շահերի հետապնդումը, բռնագրավյալ հայկական հողերի ազատագրումն ու միավորումը Հայաստանին, ջավախահայության իրավունքների պաշտպանությունը, հյուրընկալ երկրներում հավատարիմ քաղաքացիների պատրաստումը, ազգային դաստիարակությունը, հայկական համայնքների կազմակերպումը, համայնքներում հայկական մշակույթի պահպանումն ու զորացումը, արևմտահայերենի պաշտպանությունը, Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդումը, արտագաղթի կասեցումը, ազգային ամբողջական միասնականության ապահովումը, կուսակցությունների, կառույցների հետ համագործակցությունը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միասնականության վերականգնումը[1]: ՌԱԿ-ը կողմ է

[1] Հաղորդագրութիւն, 28.05.2023, https://ramgavar.am/ գլխաւոր/հաղորդագրութիւն: Տե՛ս նաև՝ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը գումարեց 28-րդ Ընդհանուր Պատգամաւորական ժողովը, Մայիս 26 2019, https://www.aravot.am/2019/05/26/1045767/: Տե՛ս նաև՝ Փոխան խմբագրականի - 1 Հոկտեմբեր 1921–1 Հոկտեմբեր 2015–94 տարիներ իրատես գաղափարախօսութեան ու անսակարկ հայրենասիրութեան ուղիով, 01.10.2015,

Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի գլխավորությամբ Հայ Առաքելական Եկեղեցու միասնականությանը և առաջնորդվում է «Մեկ ազգ, մեկ եկեղեցի» կարգախոսով[1]:

Արցախյան հարցում ՌԱԿ-ը կողմնակից է քաղաքական բանակցությունների միջոցով հարցի լուծմանը՝ հիմքում դնելով մարդու իրավունքների և ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը[2]: Դեռևս 1988 թվականի սեպտեմբերի 29-ին ՀՅԴ-ն, ՍԴՀԿ-ն, ՌԱԿ-ը համատեղ հայտարարություն ընդունեցին միասնականության և Ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ[3]: Հայտարարությունը համարվեց աննախադեպ Հայկական սփյուռքի պատմության մեջ, քանի որ տասնամյակներ շարունակ միմյանց դեմ պայքարող երեք ազգային քաղաքական ուժերը հանդես էին գալիս համախմբվելու և միահամուռ ուժերով համընդհանուր խնդիրները լուծելու պատրաստակամությամբ: Հայտարարությամբ Արցախի հարցի վերջնական լուծում էր դիտվում Լեռնային Ղարաբաղի միացումը Խորհրդային Հայաստանին:

Հետագա տարիներին ՀՅԴ-ն, ՌԱԿ-ը և ՍԴՀԿ-ն Արցախի հարցի կարգավորման, ինչպես նաև համահայկական առաջնահերթություններին վերաբերող հարցերի շուրջ հանդես էին գալիս համատեղ հայտարարություններով և առաջարկություններով:

Արցախի հարցով ՌԱԿ-ը խորհրդային ղեկավարությանն էր ուղղում բազմաթիվ դիմումներ, կոչեր, որոնցում այն համոզմունքն էր հայտնում, որ Խորհրդային Միությունը կարող է ապահովել Ղարաբաղի հարցի արդար լուծումը՝ այն միացնելով Խորհրդային Հայաստանին[4]:

---

https://ragmamoul.net/hy/adl-ramgavar-news/2015/10/01/փոխան-խմբագրականի-1-հոկտեմբեր-1921-1-հոկտ/: Տե՛ս նաև՝ Հաղորդագրութիւն – ՌԱԿ 27րդ Ընդհանուր Պատգամաւորական ժողովի, 29.05.2016, https://ragmamoul.net/hy/adl-ramgavar-news/2016/05/29/հաղորդագրութիւն-ռակ-27րդ-ընդհանուր-պա/:

[1] Հովհաննիսյան Է., Էջմիածին-Անթիլիաս հարաբերությունները 1988-1990 թվականներին. Հայ Առաքելական Եկեղեցու վերամիավորման հարցը, Հայագիտության հարցեր 3 (9), ԵՊՀ հրատ., Երևան, 2017, էջ 74:

[2] Ռամկավար Ազատական Կուսակցութեան կազմաւորումն ու գործունէութիւնը 1915-1951 թթ.: Ըստ ՌԱԿ Գահիրէի Վարչութեան նիստերու ատենագրութիւններուն: Փաստաթուղթերու ժողովածու /Կազմողներ՝ Ք. Պետրոսեան, Վ. Գրիգորեան: Գլխաւոր խմբագիր՝ Գ. Արշակեան.- Եր.: Հայաստանի ազգային արխիւ, հրատ., 2022, էջ 11:

[3] Սփյուռքահայ քաղաքական հոսանքներն ու գաղութները խորհրդային գաղտնի փաստաթուղթերու մէջ (1945-1991, ընտրանի), կազմեց, Գ. Եազըճեան, Երեւան, 2016, էջ 20-21: Տե՛ս նաև՝ ՍԴՀԿ, ՀՅԴ և ՌԱԿ համատեղ յայտարարութիւնը. 29 Սեպտեմբեր, 1988, https://www.aniarc.am/2022/09/29/29-september-1988-3-party-statement/

[4] ՀԱԱ, ֆ. 326, ց. 7, գ. 137, թ. 3:

ՌԱԿ-ը նաև ցույցեր էր կազմակերպում ի պաշտպանություն Արցախի ժողովրդի հերոսական պայքարի և Հայաստանի Հանրապետության[1], ինչպես նաև կոչեր էր ուղղում սփյուռքահայությանը՝ Հայաստանի և Արցախի օգտին նվիրատվություններ կատարելու համար[2]:

Քարոզչական աշխատանքներից զատ կուսակցության անդամները մասնակցել են Արցախյան առաջին և երկրորդ պատերազմներին և իրենց կյանքն են տվել հանուն հայրենիքի:

ՌԱԿ-ը հանդես եկավ նաև հայ-թուրքական արձանագրությունների դեմ և ավանդական կուսակցությունների հետ համատեղ գտնում էր, որ դրանք վնասակար են Հայ դատի համար՝ ՀՀ նախագահին կոչ անելով հետ կանչել իր ստորագրությունները[3]:

ՌԱԿ-ը ընդգրկված էր նաև Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովում և Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող տարածաշրջանային հանձնախմբերում:

Կուսակցությունը՝ որպես համահայկական կառույց, ակտիվորեն մասնակցել է Հայաստան-Սփյուռք համաժողովներին (1999, 2002, 2006, 2011, 2014, 2017) և հանդես եկել հայության առաջնահերթություններին վերաբերող առաջարկություններով[4]:

Հայաստանում և Արցախում ՌԱԿ-ը իրագործում է մի շարք երկարաժամկետ ծրագրեր: 1996 թվականից ապահովում է Ծիծեռնակաբերդի Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրի անմար կրակի հովանավորությունը[5]: Այսօր ևս ՌԱԿ-ը իր միջոցներով Ծիծեռնակաբերդում իրագործում է տարատեսակ

---

[1] «Ազգ», 08.05.1991:

[2] Ռամկավար Ազատական Կուսակցութիւն, Կոչ հայ ժողովուրդին, «Միութիւն», 1990, թիւ 2, փետրուար, Ե տարի, էջ 1:

[3] Հայկական ավանդական կուսակցությունները հայտարարություն են տարածել, 09.12.2013, https://armenpress.am/arm/news/743133:

[4] «Հայաստանի Հանրապետություն», 24.09.1999: Տե՛ս նաև՝ «Ազգ», 28.09.1999: Տե՛ս նաև՝ Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողով, համաժողովի նյութեր, 19-20.09.2011, Երևան, 2011, էջ 35-38: Տե՛ս նաև՝ Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողով, համաժողովի նյութեր, 18-21.09.2014, Երևան, 2017, էջ 49-54:

[5] Գասարճեան Յ. Ս., Նուիրում Ռ.Ա.Կ.-ի ճամբով, Յիսնամեայ գործունէութեան արձանագրութիւն, Հաւաքեց եւ խմբագրեց Յովիկ Էօրտեքեան, Երեւան, 2016, էջ 60: Տե՛ս նաև՝ Ռամկավար Ազատական Կուսակցութիւն. 100 ամեակ, Դար մը ազգանուէր ծառայութիւն, խմբ. Ասատուր Տէվլեթեան, Երեւան, 2023, էջ 152:

ծրագրեր՝ տարածքի կանաչապատում, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի պահեստասենյակների կահավորում և այլն:

1991 թվականի ապրիլի 11-14-ին Մոնրեալում տեղի ունեցած ՌԱԿ ԺԸ Ընդհանուր պատգամավորական ժողովը որոշում է հայրենիքում հիմնել Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցություն (ՀՌԱԿ)[1]: ՀՌԱԿ-ը իր գոյության մասին հայտարարեց 1991 թվականի հուլիսի 1-ին, իսկ պաշտոնապես գրանցվեց հուլիսի 4-ին[2]:

ՀՌԱԿ-ի նպատակներն էին Հայաստանի անկախության ապահովումն ու պահպանումը, հայկական պետական իշխանության ներքո Հայաստանի տարածքային ամբողջականության վերականգնումը, պետությունների և բարձրագույն ատյանների կողմից Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հետապնդումը, ՀՀ սահմաններում ժողովրդական կամքի գերիշխանության, ռամկավարական (ժողովրդավարական) և ազատական սկզբունքների կիրառումը, Հայաստանի տնտեսական, քաղաքական, հասարակական և մշակութային բարգավաճման համար աշխատելը, Հայաստանի պետական սահմաններում հայ ժողովրդի ազգահավաքն իրագործելու նպատակով հասարակական, քաղաքական և տնտեսական նախապայմանների ստեղծումը, Հայաստանի և արտերկրի հայության միջև փոխադարձ բազմակողմանի կապերի ամրապնդումը[3]:

ՀՌԱԿ-ը նաև մասնաճյուղեր հիմնեց Հայաստանում: Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում ուներ երիտասարդական ակումբներ, Երևանում գործում էին «Արմենական», «Երիտասարդ ռամկավար», «Ազատական» ակումբները[4]: 2015 թվականին Արցախում հիմնվեց ՌԱԿ կառույցը[5]:

1991-1995 թվականներին ՀՌԱԿ-ը հրատարակել է երրորդ հանրապետության առաջին անկախ օրաթերթը՝ «Ազգ»-ը, հիմնել ձայնասփյուռի կայան և «Արանոսյան» գիտահետազոտական կենտրոնը[6]:

---

[1] Ռամկավար Ազատական Կուսակցութիւն. 100 ամեակ, Դար մը ազգանուէր ծառայութիւն, էջ 34, 57:

[2] Նույն տեղում, էջ 57: Տե՛ս նաև՝ «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 725:

[3] Հայաստանի Հանրապետություն: Կուսակցություններ, Երևան, 2002, էջ 20-22:

[4] Պետրոսյան Ք., Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1988-2001թթ., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2011, էջ 14:

[5] Հայտարարություն «Ռամկավար ազատական կուսակցության» (Արցախ) հիմնադիր համագումարի մասին, 06.06.2015, https://ragmamoul.net/hy/adl-ramgavar-news/2015/06/06/հայտարարություն-արցախ-հիմնադիր-համա/: Տե՛ս նաև՝ Ստեփանակերտի մէջ կայացաւ Արցախի մէջ նորաստեղծ Ռամկավար Ազատական Կուսակցութեան հիմնադիր համագումարը, 14.06.2015, https://ragmamoul.net/hy/adl-ramgavar-news/2015/06/14/Ստեփանակերտի-մէջ-կայացաւ-Արցախի-մէջ-ն/:

[6] Ռամկավար Ազատական Կուսակցութիւն. 100 ամեակ, Դար մը ազգանուէր ծառայութիւն, էջ 34, 58:

ՀՀ անկախության առաջին տարիներին ՀՌԱԿ-ը Հայաստանի ամենահեղինակավոր կուսակցություններից մեկն էր, որը կարևոր մասնակցություն բերեց Հայաստանի անկախության հանրաքվեի քարոզչության, նախագահական և խորհրդարանական մասնակի ընտրություններին, տնտեսական բարեփոխումների առաջարկների (ՌԱԿ Հայաստանի տնտեսական զարգացման խորհուրդ), ինչպես նաև խորհրդարանում իր աշխույժ գործունեությամբ[1]: ՀՌԱԿ-ը «Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կազմակերպությունների հայտարարությունը 1991 թվականի սեպտեմբերի 21-ի Հայաստանի Հանրապետության հանրաքվեի առթիվ» պատմական վավերագիրը ստորագրող վեց կուսակցություններից է, որով հայրենաբնակ հայությանը կոչ էր արվում «Այո» ասել Անկախության հանրաքվեին[2]:

ՌԱԿ-ն ակտիվորեն մասնակցեց նաև նորանկախ երկրի հասարակական-քաղաքական կյանքին: ՀՀ հռչակումից հետո ՌԱԿ-ը 1991 թվականի ամռանը հայտարարեց, որ Հայոց համազգային շարժման (ՀՀՇ) և իր հարցադրումների միջև սկզբունքային տարաձայնություններ չկան, ուստի նախագահական ընտրություններում սատարում է Լևոն Տեր-Պետրոսյանին[3]:

1991-1995 թվականներին ՀՌԱԿ-ը ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհրդում ուներ մեծությամբ երկրորդ պատգամավորական խմբակցությունը (19 պատգամավոր)՝ Վիգեն Խաչատրյանի գլխավորությամբ[4]: Սակայն հետագա տարիներին արտաքին և ներքին խնդիրների, իշխանությունների պառակտիչ քայլերի, ինչպես նաև ֆինանսական միջոցների սակավության հետևանքով կուսակցությանը չհաջողվեց մուտք գործել խորհրդարան:

1995 թվականից մինչև 1998 թվականի փետրվարը ՀՌԱԿ-ը իշխանությունների կողմից ենթարկվում էր ոչ պաշտոնական հետապնդումների, փորձ էր արվում խափանել նրա գործունեությունը, փակել ՀՌԱԿ հանրապետական վարչության գրասենյակը և «Ազգ» օրաթերթը[5]:

1995 թվականի խորհրդարանական ընտրություններն անցան զանգվածային խախտումներով: Խորհրդարանում առավելագույն թվով տեղեր զբաղեցնելու նպատակով իշխող ՀՀՇ կուսակցությունը ստեղծել էր «զուգահեռ»

---

[1] Նույն տեղում, էջ 57:

[2] Նույն տեղում: Տե՛ս նաև՝ Ավետիքյան Հ., ՌԱԿ-ը դեռ անելիք ունի. կուսակցության հիմնադրման 100-ամյակի առիթով, 6 հոկտեմբերի 2021, http://www.aniarc.am/2021/10/06/rak-party-100-hakob-avedikian/: Տե՛ս նաև՝ «Ազգ», 30.09.2021:

[3] Դալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, 2004, էջ 165:

[4] Հայաստանի Հանրապետություն: Կուսակցություններ, էջ 21: Տե՛ս նաև՝ Ռամկավար Ազատական Կուսակցութիւն, 100 ամեակ, Դար մը ազգանուէր ծառայութիւն, էջ 34, 58:

[5] Հայաստանի Հանրապետություն: Կուսակցություններ, էջ 21:

կազմակերպություններ, հակառակ ՀՅԴ-ի՝ ստեղծեց «Հայաստանի հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը, ՌԱԿ-ի դեմ՝ Ռամկավարազատական (լիբերալ-դեմոկրատական) կուսակցությունը, որը 1995 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո «Հանրապետություն» միավորման կազմում ուներ 6 պատգամավոր[1]:

1990-ական թվականների սկզբներին, երբ ՀՀ իշխանությունները ՀՅԴ-ի նկատմամբ կիրառեցին պատժիչ գործողություններ (կուսակցության արգելում Հայաստանում, նրա անդամների նկատմամբ հալածանքներ և հետապնդումներ) ՌԱԿ-ը հանդես եկավ ՀՅԴ-ի պաշտպանությամբ՝ հրապարակորեն դատապարտելով ՀՀ իշխանությունների գործողությունները և դիտելով դրանք վտանգավոր նոր ձևավորվող ժողովրդավարական հասարակության համար: Այդ ընթացքում ռամկավարներն ունեին ՀՅԴ-ի հետ համագործակցության փորձ քաղաքացիական համաձայնության Սահմանադրական խորհրդի շրջանակներում[2]:

1996 թվականի սեպտեմբերի 13-ին ՀՌԱԿ-ը միացավ 14 կուսակցությունների և 69 հասարակական կազմակերպությունների ղեկավարների՝ առաջիկա նախագահական ընտրություններում գործող նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի թեկնածությունը սատարող հայտարարությանը[3]: Այդ շրջանում անկայուն էր իրավիճակը ոչ միայն կուսակցության հայաստանյան հատվածում, այլև կուսակցության մեջ ընդհանրապես:

1990-ական թվականներից սկսած՝ ՌԱԿ-ի շարքերում նկատելի դարձան ներքին խմորումներ ու տարակարծություններ, որին նպաստեցին նաև հայաստանյան իշխանությունները: Արդյունքում ՌԱԿ-ը քանիցս պառակտվեց և հայտնվեց խորը ճգնաժամի մեջ:

1995 թվականի սեպտեմբերի 1-2-ը Կիպրոսում կայացած ՌԱԿ 19-րդ Ընդհանուր պատգամավորական ժողովը կազմավորեց Կենտրոնական վարչություն՝ Հակոբ Գասարճյանի ատենապետությամբ (Բեյրութ)[4], ընդունեց Հայտարարություն, ինչպես նաև Կենտրոնը վերստին տեղափոխեց Բեյրութ:

---

[1] «Հայաստան» հանրագիտարան, ՀՀ ԳԱԱ, գիտահրատ. խորհուրդ՝ Հ.Մ.Այվազյան (գլխ. խմբագիր) և ուրիշներ, Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 2012, էջ 243: Տե՛ս նաև՝ Մինասյան Է., Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն, Երևան, 2013, էջ 263, 270: Տե՛ս նաև՝ Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները. 1918 թվականից մինչև մեր օրերը, Երևան, ԵՊՀ հրատ., 2017, էջ 147:

[2] Дашнаки и рамкавары: мемуары Ступишина, March 11, 2017, http://www.aniarc.am/2017/03/11/stupishin-book-dashnaks-and-ramkavars/: Տե՛ս նաև՝ Источник –http://www.e-reading.club/bookreader.php/91530/Stupishin_-_Moya_missiya_v_Armenii._1992-1994.html

[3] Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները. 1918 թվականից մինչև մեր օրերը, էջ 148:

[4] Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 141: Տե՛ս նաև՝ «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 724:

Կուսակցության նորընտիր վարչության և նախկին ղեկավար կազմի անդամների միջև ի հայտ եկած կազմակերպական բնույթի հակասությունների հետևանքով կուսակցությունից հեռացված նախորդ ղեկավար կազմի անդամները 1996 թվականին Բոստոնում հրավիրված ժողովում վերստանձնելով իրենց լիազորությունները՝ կազմավորեցին ևս մեկ Կենտրոնական վարչություն՝ Հայկաշեն Ուզունյանի ատենապետությամբ[1]: Այսպիսով, սփյուռքում նույն անվան տակ սկսեցին գործել երկու կուսակցություններ՝ միմյանց նկատմամբ անհաշտ ղեկավար մարմիններով:

Հետագա բանակցությունները հանգեցրին կուսակցության վերամիավորմանը, որը տեղի ունեցավ 2000 թվականի ապրիլի 8-ին՝ Աթենքում հրավիրված ՌԱԿ 22-րդ Ընդհանուր պատգամավորական ժողովի ընթացքում[2]: Հայկաշեն Ուզունյանն ընտրվեց կուսակցության պատվո նախագահ (Փարիզ), Լիբանանի խորհրդարանի պատգամավոր Հակոբ Գասարճյանը՝ վարչության ատենապետ:

Հետագայում սակայն կուսակցության միասնությունը ոչ միայն չկայացավ, այլև հակասությունները գնալով ավելի սրվեցին՝ տարածվելով նաև ՀՌԱԿ-ի վրա և ավելի խորացնելով կուսակցության ճգնաժամը:

2012 թվականին ՀՌԱԿ-ը միավորվեց Արմենական-ՌԱԿ կուսակցության հետ՝ «Ռամկավար-ազատական կուսակցություն (Հայաստան)» անունով, որի նախագահ ընտրվեց Հակոբ Ավետիքյանը[3]: Այսպիսով, 2012 թվականից Հայաստանում Հակոբ Ավետիքյանի ատենապետությամբ սկսեց գործել միասնական Ռամկավար ազատական կուսակցությունը, որի ղեկավար մարմինը կոչվում էր Հանրապետական վարչություն և կազմված էր 25 անդամից[4]:

Միավորված կառույցը 2012 թվականի օգոստոսի 6-ին ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետռեգիստրի գործակալության կողմից պաշտոնապես գրանցվեց որպես Ռամկավար ազատական կուսակցություն:

Սփյուռքում գործող ՌԱԿ-ը դա հիմնավորեց նրանով, որ Հայաստանի իշխանությունները Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում իրենց մշակած ծրագրերով (արձանագրություններ), չկարողանալով իրենց կամքը պարտադրել ՌԱԿ-ի վրա, 2012 թվականի հուլիսին նախ պարտադրաբար լուծարեցին ՀՌԱԿ-ը, ապա կյանքի կոչեցին «շինծու և դրածո մի խմբավորում» և այն անվանեցին Ռամկավար ազատական կուսակցություն՝ նրան

---

[1] Նույն տեղում:

[2] Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 142: Տե՛ս նաև՝ «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 725:

[3] «Հայաստան» հանրագիտարան, էջ 1060:

[4] Հայաստանում այսուհետ գործելու է միասնական Ռամկավար ազատական կուսակցությունը, 21.08.2012, http://news.am/arm/news/117962.html:

շնորհելով նաև պետական արձանագրություն[1]: Ըստ սփյուռքյան թևի՝ այդ միավորը ոչ միայն բացարձակապես որևէ առնչություն կամ աղերս չուներ Ռամկավար ազատական հարյուրամյա կուսակցության հետ, այլև ծրագրերով, աշխարհայացքով և կողմնորոշմամբ հիմնովին հակադրվում էր նրան:

Կուսակցության միավորման ուղղությամբ հետագա տարիներին ձեռնարկված ջանքերը ցանկալի արդյունք չտվեցին: 2016 թվականի հոկտեմբերի 5-7-ին ՌԱԿ Հանրապետական վարչության հրավերով Երևանում գումարվեց կուսակցության 3-րդ (27) Պատգամավորական ժողովը՝ համագործակցությամբ սփյուռքում գործող ՌԱԿ Վերականգնումի և միության շարժման վարչության[2]: Ժողովում ընդունված հայտարարությամբ ազդարարվեց ՌԱԿ-ի միավորման, այն հայաստանակենտրոն կառույց դարձնելու պատրաստակամությունը, որի նպատակն էր Հայաստանում ժողովրդի բարօրությանը ծառայող աշխատանքների աշխուժացումն ու մարդու իրավունքների անխափան գործադրությունը, իսկ սփյուռքում հայապահպանության դժվարին աշխատանքներին աջակցելն ու Հայ դատին զորավիգ լինելը:

Ժողովի արդյունքում 2016 թվականի հոկտեմբերի 7-ին ՌԱԿ Հանրապետական վարչության և ՌԱԿ վերականգնումի և միության շարժման միջև ստորագրված համաձայնագիր-հուշագրով ՌԱԿ-ը վերածվում էր հայաստանակենտրոն կուսակցության և որպես մեկ կուսակցություն՝ ունենալով մեկ ծրագիր-կանոնագիր և մեկ ղեկավարություն: Հանրապետական վարչությունը վերանվանվում էր ՌԱԿ Կենտրոնական վարչություն, որի ղեկավարությունում տեղ էին ունենում Հայաստանի և սփյուռքի ներկայացուցիչները, կազմվում էր ՌԱԿ Գերագույն խորհուրդ մարմինը, որը ճշտելու և ծրագրելու էր ՌԱԿ-ի քաղաքականության ընդհանուր գծերը և վերահսկելու էր ՌԱԿ-ի լայնածավալ աշխատանքները[3]:

Այսպիսով, Ռամկավար ազատական կուսակցության շարքերում պառակտումը հանգեցրեց նրան, որ ՌԱԿ-ի որոշ անդամներ Հակոբ Ավետիքյանի գլխավորությամբ Հայաստանում բացեցին և գրանցեցին նոր գրասենյակ՝ հայրենիքում կուսակցության դրոշի ու տարբերանշանի օգտագործումը վերապահելով իրենց և հայտարարելով, որ իրենք են ավանդական կուսակցության իրական ներկայացուցիչները:

Սփյուռքում գործող ՌԱԿ Կենտրոնական վարչությունը հանդես եկավ Հայաստանում գործող ՌԱԿ Հանրապետական վարչության գործողությունների

---

[1] Ռամկավար Ազատական Կուսակցութիւն, 100 ամեակ, Դար մը ազգանուէր ծառայութիւն, էջ 58:

[2] Ռամկավար Ազատական Կուսակցութիւն, Հանրապետական Վարչութիւն, Պաշտօնական հաղորդագրութիւն, ՌԱԿ-ը հայաստանակեդրոն կուսակցութիւն, 11.10.2016, http:/abakanews.org/news/armenia-and-artsakh/ /պաշտօնական-հաղորդագրութիւն-2/:

[3] Նույն տեղում:

դեմ՝ ՌԱԿ անվանակոչումը բնորոշելով որպես կուսակցության ղեկավար մարմնի մոտ մեկդարյա անվան յուրացման փորձ, ինչպես նաև հակադրություն սփյուռքում իր հիմնադրությունից ի վեր ՌԱԿ-ը ղեկավարող Կենտրոնական վարչության դեմ[1]:

Սփյուռքում գործող ՌԱԿ-ը բազմիցս նշում էր, որ 2012 թվականից դասական ՌԱԿ-ի անունով Հայաստանում որպես կուսակցություն գրանցված ՌԱԿ-ը զավթել է իր անունն ու խորհրդանշանները, որի հետ ՌԱԿ Կենտրոնական վարչությունը վաղուց խզել է իր կապերը[2]:

2017 թվականին Ազատյան-Վարդիվառյան-Ավետիքյան թևը դատական գործընթաց սկսեց Սփյուռքում գործող ՌԱԿ Կենտրոնական վարչության ղեկավարության դեմ՝ արգելելով նրան կուսակցության դրոշն ու զինանշանը օգտագործել հայրենիքում:

Փոխարենը սփյուռքում գործող ՌԱԿ Կենտրոնական վարչությունը կուսակցության անվան, դրոշի և զինանշանի օգտագործման հարցով դիմեց ՀՀ արդարադատության նախարարություն, իսկ 2018 թվականի սկզբին դատարան՝ պահանջելով պարտավորեցնել ՀՀ-ում 1991 թվականից գործող ՌԱԿ-ին փոխելու իր անունը, դրոշն ու զինանշանը: Սակայն ՌԱԿ Կենտրոնական վարչության դիմումը մերժվեց դատարանի կողմից:

2019 թվականի նոյեմբերի 10-ին տեղի ունեցավ Հայաստանում գործող Ռամկավար ազատական կուսակցության 4-րդ (25) Ընդհանուր պատգամավորական ժողովը՝ Համագումարը, որին մասնակցեցին գրանցված 130 պատգամավորներից 127-ը: Ժողովի օրակարգային հարցերից էին ՌԱԿ ատենապետի և Կենտրոնական վարչության ընտրությունները:

Կուսակցության ատենապետ Հակոբ Ավետիքյանը տարիքի հետևանքով հրաժարական տվեց և ՌԱԿ պատգամավորական ժողովը փակ գաղտնի քվեարկության արդյունքում 72 կողմ ձայնով ՌԱԿ ատենապետ ընտրեց Հրաչյա Կարապետյանին:

Իր հերթին սփյուռքում գործող ՌԱԿ Կենտրոնական վարչությունը նշում էր, որ կուսակցությունն ունի միայն մեկ ղեկավար մարմին՝ ՌԱԿ Կենտրոնական

---

[1]Յայտարարութիւն, 31.03.2017, https://ragmamoul.net/hy/adl-ramgavar-news/2017/03/31/յայտարարութիւն-8/:

[2]Յայտարարութիւն, 25.07.2016, https://ragmamoul.net/hy/adl-ramgavar-news/2016/07/25/յայտարարութիւն-6/: Տե՛ս նաև՝ ՌԱԿ-ի Հայաստանի կառոյցը շեղած է ՌԱԿ-ի հետ իր ունեցած բարոյական կապէն. Այսպէս կոչուած ՀՌԱԿ ղեկավարութիւնը չի ներկայացներ աշխարհասփիւռ 95 ամեայ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, 09.02.2017, https://ragmamoul.net/hy/adl-ramgavar-news/2017/02/09/ռակ-ի-հայաստանի-կառոյցը-շեղած-է-ռակ-ի-հե/:

վարչությունը, և ՌԱԿ Գերագույն խորհուրդ անունով մարմին գոյություն չունի ՌԱԿ Կանոնադրության մեջ[1]:

2022 թվականի հունիսին Հայաստանում և սփյուռքում մեծ շուքով նշվեց ՌԱԿ 100-ամյակը, որին հաջորդեց 2023 թվականի մայիսին տեղի ունեցած ՌԱԿ 29-րդ Ընդհանուր պատգամավորական ժողովը:

ՌԱԿ-ի 100-ամյա անշեղ ընթացքը հույս է ներշնչում, որ կուսակցությունը կհաղթահարի իր առջև ծառացած հիմնախնդիրներն ու մարտահրավերները: 21-րդ դարի աշխարհաքաղաքական սրընթաց փոփոխությունների և Հայաստանի Հանրապետության առջև դրված օրակարգային խնդիրների առաջնային պահանջն է համայն հայության միասնությունն ու համախմբումը, պայքարի միասնական մարտավարության մշակումն ու իրագործումը: Այդ գործում կարևոր դերակատարություն ունի նաև մեկդարյա ՌԱԿ-ը, որը պատմական փորձով հավաստել է իր արդյունավետ համագործակցությունը հայրենիքի հետ, հնարավոր բոլոր միջոցներով սատարել նրա զարգացմանն ու գործնականորեն մասնակցել հայրենաշինության, հայրենադարձության, Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդմանն ու զարգացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Ազգ», 08.05.1991:
2. «Ազգ», 28.09.1999:
3. «Ազգ», 30.09.2021:
4. Ավետիքյան Հ., ՌԱԿ-ը դեռ անելիք ունի. կուսակցության հիմնադրման 100-ամյակի առիթով, 6 հոկտեմբերի 2021, http://www.aniarc.am/2021/10/06/rak-party-100-hakob-avedikian/:
5. Գասարճեան Յ. Ս., Նուիրում Ռ.Ա.Կ.-ի ճամբով, Յիսնամեայ գործունէութեան արձանագրութիւն, Հաւաքեց եւ խմբագրեց Յովիկ Էօրտեքեան, Երեւան, 2016:
6. Դալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, 2004:
7. Կայ մէկ ու միակ Ռամկավար Ազատական Կուսակցութիւն. ՌԱԿ Կեդրոնական Վարչութիւնը կը դատապարտէ խորթ եւ արհեստածին մարմիններ

[1] Կայ մէկ ու միակ Ռամկավար Ազատական Կուսակցութիւն. ՌԱԿ Կեդրոնական Վարչութիւնը կը դատապարտէ խորթ եւ արհեստածին մարմիններ ստեղծելու վերջերս կատարուող ապօրինի փորձերը, 14.10.2016, https://ragmamoul.net/hy/adl-ramgavar-news/2016/10/14/կայ-մէկ-ու-միակ-ռամկավար-ազատական-կուս/: Տե՛ս նաև՝ Յայտարարութիւն, 06.02.2017, https://ragmamoul.net/hy/adl-ramgavar-news/2017/02/06/յայտարարութիւն-7/:

ստեղծելու վերջերս կատարուող ապօրինի փորձերը, 14.10.2016, https://ragmamoul.net/hy/adl-ramgavar-news/2016/10/14/կայ-մէկ-ու-միակ-ռամկավար-ազատական-կուս/:

8. ՀԱԱ, ֆ. 326, ց. 7, գ. 137, թ. 3:

9. Հաղորդագրութիւն – ՌԱԿ 27րդ Ընդհանուր Պատգամաւորական ժողովի, 29.05.2016, https://ragmamoul.net/hy/adl-ramgavar-news/2016/05/29/հաղորդագրութիւն-ռակ-27րդ-ընդհանուր-պա/:

10. Հաղորդագրութիւն, 28.05.2023, https://ramgavar.am/գլխաւոր/հաղորդագրութիւն:

11. «Հայ սփյուռք» հանրագիտարան, «Հայ սփյուռք» հանրագիտարանի խմբագրական հանձնաժողով՝ Հ. Մ. Այվազյան (գլխ. խմբագիր-տնօրեն) և ուր., Երևան, Հայկ. հանրագիտարան հրատ., 2003:

12. «Հայաստան» հանրագիտարան, ՀՀ ԳԱԱ, գիտահրատ. խորհուրդ՝ Հ. Մ. Այվազյան (գլխ. Խմբագիր) և ուրիշներ, Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 2012:

13. Հայաստանի Հանրապետություն: Կուսակցություններ, Երևան, 2002:

14. «Հայաստանի Հանրապետություն», 24.09.1999:

15. Հայաստանում այսուհետ գործելու է միասնական Ռամկավար ազատական կուսակցությունը, 21.08.2012, http://news.am/arm/news/117962.html:

16. Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողով, համաժողովի նյութեր, 18-21.09.2014, Երևան, 2017:

17. Հայկական ավանդական կուսակցությունները հայտարարություն են տարածել, 09.12.2013, https://armenpress.am/arm/news/743133:

18. Հայկական հարց հանրագիտարան, https://hy.wikisource.org//wiki/Էջ:Հայկական_Հարց_Հանրագիտարան_(Armenian_Question_Encyclopedia).djvu/384:

19. Հայտարարություն «Ռամկավար ազատական կուսակցության» (Արցախ) հիմնադիր համագումարի մասին, 06.06.2015, https://ragmamoul.net/hy/adl-ramgavar-news/2015/06/06/հայտարարություն-արցախ-հիմնադիր-համա/:

20. Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները. 1918 թվականից մինչև մեր օրերը, Երևան, ԵՊՀ հրատ., 2017:

21. Հովհաննիսյան Է., Էջմիածին-Անթիլիաս հարաբերությունները 1988-1990 թվականներին. Հայ Առաքելական Եկեղեցու վերամիավորման հարցը, Հայագիտության հարցեր 3 (9), ԵՊՀ հրատ., Երևան, 2017:

22. Մինասյան Է., Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն, Երևան, 2013:

23. Յայտարարութիւն, 06.02.2017, https://ragmamoul.net/hy/adl-ramgavar-news/2017/02/06/յայտարարութիւն-7/:

24. Յայտարարութիւն, 25.07.2016, https://ragmamoul.net/hy/adl-ramgavar-news/2016/07/25/յայտարարութիւն-6/:

25. Յայտարարութիւն, 31.03.2017, https://ragmamoul.net/hy/adl-ramgavar-news/2017/03/31/յայտարարութիւն-8/:

26. Պետրոսյան Ք., Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1988-2001թթ., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2011:

27. ՌԱԿ-ի Հայաստանի կառոյցը շեղած է ՌԱԿ-ի հետ իր ունեցած բարոյական կապէն. Այսպէս կոչուած ՀՌԱԿ ղեկավարութիւնը չի ներկայացներ աշխարհասփիւռ 95 ամեայ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, 09.02.2017, https://ragmamoul.net/hy/adl-ramgavar-news/2017/02/09/ռակ-ի-հայաս-տանի- կառոյցը-շեղած-է-ռակ-ի-հե/:

28. Ռամկավար Ազատական Կուսակցութեան կազմաւորումն ու գործունէութիւնը 1915-1951 թթ.: Ըստ ՌԱԿ Գահիրէի Վարչութեան նիստերու ատենագրութիւններուն: Փաստաթուղթերու ժողովածու /Կազմողներ՝ Ք. Պետրոսեան, Վ. Գրիգորեան: Գլխաւոր խմբագիր՝ Գ. Արշակեան.- Եր.: Հայաստանի ազգային արխիւ, հրատ., 2022:

29. Ռամկավար Ազատական Կուսակցութիւն, Կոչ հայ ժողովուրդին, «Միութիւն», 1990, թիւ 2, փետրուար, Ե տարի:

30. Ռամկավար Ազատական Կուսակցութիւն, Հանրապետական Վարչութիւն, Պաշտօնական հաղորդագրութիւն, ՌԱԿ-ը հայաստանակեդրոն կուսակցութիւն, 11.10.2016, http:/abakanews.org/news/armenia-and-artsakh/ /պաշտօնական-հաղորդագրութիւն-2/:

31.Ռամկավար Ազատական Կուսակցութիւն. 100 ամեակ, Դար մը ազգանուէր ծառայութիւն, խմբ. Ասատուր Տէվլեթեան, Երեւան, 2023:

32. Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը գումարեց 28-րդ Ընդհանուր Պատգամաւորական ժողովը, Մայիս 26 2019, https://www.aravot.am/2019/05/26/1045767/:

33. ՍԴՀԿ, ՀՅԴ և ՌԱԿ համատեղ յայտարարութիւնը. 29 Սեպտեմբեր, 1988, https://www.aniarc.am/2022/09/29/29-september-1988-3-party-statement/:

34. Ստեփանակերտի մէջ կայացաւ Արցախի մէջ նորաստեղծ Ռամկավար Ազատական Կուսակցութեան հիմնադիր համագումարը, 14.06.2015, https://ragmamoul.net/hy/adl-ramgavar-news/2015/06/14/Ստեփանակերտի-մէջ-կայացաւ-Արցախի-մէջ-ն/:

35. Սփյուռքահայ կազմակերպություններ, Երևան, 2002:

36. Սփյուռքահայ քաղաքական հոսանքներն ու գաղութները խորհրդային գաղտնի փաստաթուղթերու մէջ (1945-1991, ընտրանի), կազմեց, Գ. Եազըճեան, Երեւան, 2016:

37. Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողով, համաժողովի նյութեր, 19-20.09.2011, Երևան, 2011:

38. Սփյուռքի հեռանկարները գլոբալացվող աշխարհում, միջազգային համաժողով, զեկուցումների ժողովածու, Երևան, 2012:

39. Փոխան խմբագրականի - 1 Հոկտեմբեր 1921–1 Հոկտեմբեր 2015–94 տարիներ իրատես գաղափարախօսութեան ու անսակարկ հայրենասիրութեան ուղիով, 01.10.2015, https://ragmamoul.net/hy/adl-ramgavar-news/2015/10/01/փոխան-խմբագրականի-1-հոկտեմբեր-1921-1-հոկտ/:

40. Дашнаки и рамкавары: мемуары Ступишина, March 11, 2017, http://www.aniarc.am/2017/03/11/stupishin-book-dashnaks-and-ramkavars/.

41. Источник – http://www.e-reading.club/bookreader.php/91530/Stupishin_-_Moya_missiya_v_Armenii._1992-1994.html.

THE ACTIVITY OF THE DEMOCRATIC LIBERAL PARTY – RAMGAVAR IN THE THIRD REPUBLIC OF ARMENIA

PETROSYAN KNARIK
PhD in Historical Sciences,
Lecturer of GSU
e.mail: k_narik@mail.ru

Right after the collapse of the Soviet Union and the proclamation of the Third Republic of Armenia, the national-traditional Armenian Democratic Liberal Party - Ramgavar returned to the homeland, where it was registered on July 4, 1991, under the name of the Democratic Liberal Party of Armenia - Ramgavar.

Ramgavar took part in the social and political life of the Third Republic of Armenia, as well as in the support of the motherland and the Artsakh national liberation struggle.

Ramgavar is a member of the Board of Trustees of the Hayastan All-Armenian Fund and actively participates in the fundraising. It was also a member of the state commission coordinating the events of the 100th anniversary of the Armenian Genocide.

Being a national party, Ramgavar considered its main goal and directions of activity to be the pursuit of the Armenian Cause, the reconstruction, prosperity, and development of Armenia, the economic and cultural rise, the implementation of democratic liberal principles in the Armenian state and public life, the reunification of the Armenian people in the Motherland and the preservation of Armenians, the liberation and unification of confiscated Armenian lands to Armenia, the training of loyal citizens in the host countries, the organization of Armenian communities, the maintenance and strengthening of Armenian culture in the communities, the reinforcement of Homeland-Diaspora ties, cooperation with parties and structures, and the restoration of the unity of the Armenian Apostolic Church. When it comes to Artsakh issue, the party is in favor of solving the issue through political negotiations, based on the principle of the right of nations to self-determination.

In the 1990s, Ramgavar party split, which has not been overcome to this day. Unfortunately, several attempts at unification have not been successful.

Nevertheless, the historical role and contribution of Ramgavar in the protection of Armenia, strengthening ties with the motherland, protection of Armenian rights, and instilling patriotism and national pride among the young generation are invaluable.

Keywords: *Republic of Armenia, Armenian Democratic Liberal Party, Ramgavar, General Parliamentary Assembly, Ramgavar Central Department, Ramgavar circles, Ramgavar District Administration, Ramgavar Chairman, Declaration, Armenian Cause, Artsakh National Liberation Struggle.*

ДЕЯТЕЛЬНОСТЬ ДЕМОКРАТИЧЕСКОЙ ЛИБЕРАЛЬНОЙ ПАРТИИ РАМКАВАР В ТРЕТЬЕЙ РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

ПЕТРОСЯН КНАРИК
Кандидат исторических наук,
Преподаватель ГГУ
электронная почта: k_narik@mail.ru

Сразу после распада Советского Союза и провозглашения Третьей Республики Армения национально-традиционная армянская Демократическая либеральная партия - Рамкавар вернулась на родину, где была зарегистрирована 4 июля 1991 года под названием Демократическая либеральная партия Армении - Рамкавар.

Рамкавар принимал участие в общественно-политической жизни Третьей Республики Армения, а также в поддержке Родины и национально-освободительной борьбы Арцаха.

Рамкавар является членом попечительского совета Всеармянского фонда «Айастан» и активно участвует в мероприятиях фонда. Она также входила в состав государственной комиссии по координации мероприятий, посвященных 100-летию Геноцида армян.

Будучи национальной партией, Рамкавар считал своей главной целью и направлениями деятельности стремление к Армянскому суду, восстановление, процветание и развитие Армении, экономический и культурный подъем, реализацию демократических либеральных принципов в армянской государственной и общественной жизни, объединение армянского народа на Родине и сохранение армянства, освобождение и присоединение конфискованных армянских земель к Армении, обучение лояльных граждан в принимающих странах, организация армянских общин, сохранение и укрепление армянской культуры в общинах, укрепление связей Родина-Диаспора, сотрудничество с партиями и структурами, восстановление единства Армянской Апостольской Церкви. В арцахском вопросе выступает за решение вопроса путем политических переговоров, основанных на принципе права наций на самоопределение.

В 1990-х годах в Рамкаваре произошел раскол, который не преодолен и по сей день. К сожалению, несколько попыток объединения не увенчались успехом.

Тем не менее, историческая роль и вклад Рамкавара в дело сохранения армянства, укрепление связей с родиной, защиту прав армян, воспитание патриотизма и национальной гордости среди молодого поколения неоценимы.

Ключевые слова: *Республика Армения, Демократическая либеральная партия Армении, Генеральная парламентская ассамблея Рамкавар, Центральная администрация Рамкавар, Круги Рамгкавар, Районная администрация Рамгкавар, Председатель Рамкавар, Декларация, Армянский суд, Арцахская национально-освободительная борьба.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 08.06.2023թ.:
Հոդվածը գրախոսվել է 17.06.2023թ.:
Ընդունվել է տպագրության 17.05.2024թ.: